



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 56

ք. Մարալիկ

28 ապրիլի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՌԱՖԻԿԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի 9-րդ փողոցի N 32/1 հասցեի տան բնակչի կողմից լիազորված անձ Ռաֆիկ Բաբկենի Մակարյանի 23.04.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Ռաֆիկի Մակարյանի կողմից ք. Մարալիկ Նոր թաղամաս 9-րդ փողոց N 32/1 հասցեի հողամասում 1995 թվականին կառուցվել է բնակելի տուն, 2000 թվականին՝ հացատուն և ավտոտնակ, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.025 հա հողամասի՝ կից ավել օգտագործվում է 0.0359 հա հողամաս, ուստի ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Արմեն Ռաֆիկի Մակարյանի կողմից ք. Մարալիկ Նոր թաղամաս 9-րդ փողոց N 32/1 հասցեում գտնվող հողամասում 1995 թվականին կառուցված բնակելի տան, 2000 թվականին կառուցված հացատան և ավտոտնակի, ինչպես նաև օրինական հատկացված 0.025 հա հողամասի, իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.0300 հա անհատույց հատկացված հողամասի, իսկ մնացած 0.0059 հա հողամասի համար կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր՝ մուծելով գումար, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով և գույքային իրավունքները վերականգնել՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը:

2. Մույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ